ԶՐՈՒՅԵԼՈՎ ՊՈՒՏԻՆԻ ՀԵՏ

OLIVER STONE

THE PUTIN INTERVIEWS

ՕԼԻՎԵՐ ՍԹՈՈՒՆ

ՋՐՈՒՅԵԼՈՎ ՊՈՒՏԻՆԻ ՀԵՏ

Թարգմանությունն անգլերենից՝
Դավիթ Սարգսյանի

ԵՐԵՎԱՆ
2023

ՀՏԴ 32
ԳՄԴ 66.0
Ս 464

Սթոուն Օլիվեր
Ս 464 Զրուցելով Պուտինի հետ / Օ. Սթոուն; Թարգմանությունն անգլերենից՝ Դ. Սարգսյանի.- Եր.: Newmag, 2023.- 348 էջ:

Օլիվեր Սթոունը այս գիրքը գրել է Պուտինի հետ 2015-2017 թթ. անցկացրած հարցազրույցների հիման վրա, որոնք ցուցադրվել են ամերիկյան հեռուստատեսությամբ: Գրքում Վլադիմիր Պուտինը ներկայացնում է ուկրաինական ճգնաժամի արմատները, աշխարհաքաղաքական խնդիրների ռուսական տեսակետը, պատմում իր մանկության՝ երբեք չհրապարակված մանրամասները: Պուտինի հետ հարցազրույցների համար ամերիկյան մամուլը քննադատել է Սթոունին, մեղադրել միակողմանի դիրքորոշումներ հրապարակելու մեջ: Սակայն հեղինակը ցույց է տվել, թե ով է Վլադիմիր Պուտինը, ինչ աշխարհայացք ունի, որոշումներ կայացնելիս ինչ սկզբունքներով է առաջնորդվում և ինչի է պատրաստ՝ հանուն իր երկրի:

ՀՏԴ 32
ԳՄԴ 66.0

Գլխավոր գործընկեր
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ
www.ena.am

ISBN 978-9939-884-73-8
The Putin Interviews © Oliver Stone, 2020
Օլիվեր Սթոուն, «Զրուցելով Պուտինի հետ» © «Նյու Մեգ» ՍՊԸ, 2023

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակման բոլոր իրավունքները պատկանում են «Օրակուլ» և Newmag ընկերություններին: Համաձայն կնքված պայմանագրի՝ «Օրակուլ» հրատարակչության գրքերը ներկայացված են որպես Newmag ընկերության «Օրակուլ» հայ-ռուսական մատենաշար: Գրքի հայերեն թարգմանության և հրատարակման իրավունքները ձեռք են բերվել Skyhorse ընկերության հետ կնքած պայմանագրով:

Բովանդակություն

Ներածական խոսք 7

Առաջին հարցազրույց 13
Այց 1 | օր 1 | հուլիսի 2, 2015 13
Այց 1 | օր 2 | հուլիսի 3, 2015 43
Այց 1 | օր 2 | հուլիսի 3, 2015 71
Այց 1 | օր 3 | հուլիսի 4, 2015 85
Այց 1 | օր 3 | հուլիսի 4, 2015 107

Երկրորդ հարցազրույց 137
Այց 2 | օր 1 | փետրվարի 19, 2016 137
Այց 2 | օր 2 | փետրվարի 20, 2016 165

Երրորդ հարցազրույց 200
Այց 3 | օր 1 | մայիսի 9, 2016 200
Այց 3 | օր 2 | մայիսի 10, 2016 216
Այց 3 | օր 3 | մայիսի 11, 2016 231
Այց 3 | օր 3 | մայիսի 11, 2016 258

Չորրորդ հարցազրույց 270
Այց 4 | օր 1 | փետրվարի 10, 2017 270

Ծանոթագրություններ 321

Ներածական խոսք

30 տարի առաջ ես՝ որպես «Լոս Անջելես Թայմսի» թղթակից, հնարավորություն էի ունեցել իմ աչքով տեսնել սրբություն սրբոց Քաղբյուրոն՝ Խորհրդային Միության իշխանության այդ մութ, առասպելական ու ամենազոր գագաթը: Դա հնարավոր էր դարձել, քանի որ Միխայիլ Գորբաչովն այդ տարիներին իրականացնում էր թափանցիկության ու փոփոխությունների միտված իր հավակնոտ ծրագիրը: Նրա պերեստրոյկան կամ խորհրդային կառավարության վերակառուցումն անխուսափելիորեն կամ պատահականորեն վերջ էր դնելու կոմունիստական բիրտ փորձարկմանը, որի հետևանքով մոլորակի ցամաքի 1/6-ի վրա ստեղծվել էր բազմազգ, բազմամշակութային ու բազմատարածաշրջանային մի նոր, հրաշալի աշխարհ:

Իմ հարցազրույցը Քաղբյուրոյի քարոզչությունը ղեկավարող Ալեքսանդր Յակովլևի հետ էր: Նա Քաղբյուրոյի ամենալիբերալ անդամն էր ու Գորբաչովի դաշնակիցը: Ավելի ուշ նույն միջանցքի մյուս ծայրում ես թակեցի Գորբաչովի իշխանության մեջ երկրորդ մարդու համբավը վայելող Եգոր Լիգաչովի դուռը, որն առավելապես հայտնի էր որպես պերեստրոյկայի ամենակատաղի հակառակորդ: Այդ ժամանակ ես չէի հանդիպել Բորիս Ելցինի հետ, որի կերպարը նշածս երկուսի համեմատ այդքան էլ հստակ չէր նշմարվում: Ելցինը Ռուսաստանի առաջին նախագահն էր դառնալու դրանից 4 տարի անց՝ Խորհրդային Միության փլուզման շրջանում: Նա էլ իր հերթին՝ որպես վարչակազմում բարեփոխիչների խմբակցության անդամ, Կրեմլ էր բերելու նախկինում ՊԱԿ-ի փոխգնդապետ Վլադիմիր

Պուտինին: Եվ 1999 թվականի դեկտեմբերի 31-ին հրաժարական էր տալու՝ Պուտինին դարձնելով նախագահի պաշտոնակատար: 2000 թվականին էլ Պուտինն ընտրվելու էր նախագահ՝ տպավորիչ հաղթանակ տանելով կոմունիստ թեկնածուի նկատմամբ:

Պատմական ու չափազանց կարևոր հարցազրույցների ընթացքում ռեժիսոր Օլիվեր Սթոունի շփումները Պուտինի հետ ստեղծել են այս գիրքը և Showtime հեռուստաալիքով հեռարձակված 4-մասանոց հարցազրույցը: Այստեղ Պուտինը հայտարարում է, որ կարծում էր, թե Խորհրդային Միության փլուզմամբ Սառը պատերազմը և հակամարտության անվերջ սպառնալիքն ավարտվել են, սակայն դա տեղի չէր ունեցել:

Պուտինը մերժում է կոմունիզմը՝ որպես գաղափարախոսություն, և որդեգրում է ռուս ուղղափառ քրիստոնեության ավանդույթները, սակայն շարունակում է մնալ ջերմեռանդ ազգայնական՝ պնդելով, որ Ռուսաստանի հանդեպ աշխարհում պետք է լինի այնպիսի վերաբերմունք, որին, ըստ նրա, իր երկիրն արժանի է: Դա նշանակում է երկրի սահմանների հարցում պատմական մտահոգությունների հանդեպ հարգալից վերաբերմունք, ըմբռնում, որ Խորհրդային Միության փլուզումից հետո մեծ թվով ռուսախոսներ անսպասելիորեն բախվել են նոր սահմաններին: Լավագույն օրինակն Ուկրաինան է:

Սթոունի հետ զրույցում Պուտինը հարգանքի տուրք է մատուցում Գորբաչովին՝ ընդունելով, որ խորհրդային ձախողված համակարգն ուներ լուրջ բարեփոխումների կարիք, սակայն նրան մեղադրում է միամիտ լինելու, երկրի ներսում և հատկապես Միացյալ Նահանգներում այդ բարեփոխումների դեմ կատաղի խոչընդոտների ստեղծումը չնկատելու մեջ: Պուտինը մերժում է Գորբաչովի համոզմունքը, թե ողջամտությունը, միևնույն է, հաղթանակ էր տանելու, քանի որ Սառը պատերազմի երկու կողմերն էլ, ունենալով ամբողջ մոլորակը ոչնչացնելու հնարավորություն, խաղաղություն էին ուզում:

Սթոուն-Պուտին հարցազրույցների առանցքային հարցն այն է, թե ինչպես են իրադարձությունները հանգեցրել լարվածության այսօրվա վիճակին: Այդ պատճառով այս գիրքն առանցքային տեքստ է, որը թույլ է տալիս հասկանալ մեր վտանգավոր ժամանակները: 2015 թվականի հուլիսի 2-ից 2017 թվականի փետրվարի 10-ի միջակայքում տեղի ունեցած զրույցներն ընդգրկում են մի ժամանակաշրջան, երբ ռազմական

հնարավորություններով աշխարհի երկու ամենահզոր տերությունների հարաբերությունները վերջին քառորդ դարում, այսինքն՝ Սառը պատերազմի ավարտից հետո, հասել էին փոխադարձ կասկածամտության ու թշնամության ամենաբարձր կետին: Սթոունն իր մի քանի ակնարկներում հիշեցնում է, որ բոլոր երկրներին, նաև Ռուսաստանին պետք է մտահոգի այն, որ կոռումպացված տիրակալները հայրենասիրության անվան տակ են ամրապնդում իրենց իշխանությունը:

Զրույցը հարգալից է: Դրա վերջում Սթոունն ասում է, որ այն Պուտինին տալիս է «պատմության սեփական դիտանկյունը ներկայացնելու» հնարավորություն: Սակայն ռեժիսոր-լրագրողն ակտիվ երկխոսության մեջ է մտնում Պուտինի հետ և տալիս է աշխարհում Ռուսաստանի հակասական ու շարունակվող դերակատարման վերաբերյալ հարցեր՝ Սիրիայում Ասադի ռեժիմին աջակցելուց մինչև 2016 թվականի ԱՄՆ նախագահական ընտրությանը միջամտելը: Սթոունը շատ բան գիտի անիմաստ պատերազմների ու դրանց վերաբերյալ ստերի մասին, քանի որ երկու անգամ գործուղվել է Վիետնամ ու մասնակցել պատերազմին, որի մասին էլ նկարահանել է օսկարակիր «Դասակ» ֆիլմը ու դրա երկու շարունակությունները՝ «Հուլիսի 4-ին ծնվածը» և «Երկինքն ու Երկիրը»: Նա վիետնամական փայլուն եռապատում է կերտել: Սթոունը թեման լրջորեն զարգացրել է 2012 թվականին՝ Showtime հեռուստաալիքով ցուցադրած «Միացյալ Նահանգների չպատմված պատմությունը» տասմասանոց վավերագրությունում: Նա ներկայացրել է Սառը պատերազմը սկզբից մինչև դրա ավարտն ու դրանից հետո տեղի ունեցած իրադարձությունները: Ֆիլմից հետո լույս էր տեսել նույնանուն գիրքը, որը մարտահրավեր էր նետել Սառը պատերազմի մասին ամերիկյան ավանդական պատմությանը և դարձել էր առանցքային ֆոն իր այս աշխատանքի համար:

Պուտինը նույնպես լավ գիտի այս թեման: Նա Ռուսաստանում իշխանության էր եկել Խորհրդային Միության փլատակների վրա, մի երկրի, որը դիմացել էր գերմանական ներխուժման սարսափներին ու 50 միլիոն մարդու կորստին, սակայն փլուզվել էր աֆղանստանյան անիմաստ ներխուժման ընթացքում: Նա առաջնորդում է մի հասարակություն, որն ունի ռազմական հսկայական ուժ, սակայն շատ հեռու է տնտեսական խաղաղ ձեռքբերումներից:

Սթոունն ու Պուտինը համակարծիք են, որ ռազմատենչությունը կարող է ճակատագրական լինել, և երկուսն էլ մտահոգություն են հայտնում իրենց հասարակություններում եղած կայսերական արկածախնդրությանն աջակցող գաղափարախոսությունների առնչությամբ: Սակայն սա երկու հավասար մարդկանց զրույց չէ:

Սթոունը հարցեր տվող է: Նա փորձում է գլուխ հանել զրուցակցի խոսքի հակասություններից ու տարօրինակություններից: Մինչդեռ Պուտինը հստակ ցուցադրում է, որ երբեք չի մոռանում աշխարհի երկրորդ ամենահզոր բանակի գերագույն գլխավոր հրամանատար լինելու մասին, և որ իր խոսքերը հետևանքներ ունեն, որոնք շատ հեռու են հետաքրքիր ֆիլմի պահանջներից: Այնուամենայնիվ, այստեղ իսկապես նկատվում է թեկուզ զգուշավոր, սակայն փոխադարձ հարգանք երկուսի միջև, ինչը թույլ է տալիս խորասուզվել ու տեսնել հզոր մարդկանց՝ պետության ղեկավարի ու արտիստի մտքերի խորքը:

Սթոունի համար ֆիլմ նկարելն իր երկրի արտաքին քաղաքականությունը որոշողների ենթադրյալ իմաստուն լինելու հանդեպ իր արհամարհանքի արտահայտման բնական ձև է: Պուտինի համար հարցը ավելի բարդ է. նա մի երկրի ղեկավար է, որը գտնվում է խորհրդային կոմունիստական գաղափարախոսությունից ռուսաստանյան ազգային նոր ինքնություն տանող լուրջ վերափոխման փուլում: Այդ ինքնությամբ փորձ է արվում միմյանց կապել Ռուսաստանի «հազարամյա» պատմությունը՝ ցարերից մինչև հզոր օլիգարխներ, որոնք մեր երբեմնի կապիտալիստների ռուսաստանյան տարբերակն են:

Պուտինն այստեղ հանդես է գալիս որպես ռուսական վիրավոր ազգայնականության մարգարե: Այդ ազգայնականությունն ունի սպառնալիք դառնալու պոտենցիալ, սակայն պետք չէ այն շփոթել Պուտինի իշխանությանը նախորդած կոմունիստական գաղափարախոսության հետ, ինչի հանդեպ Պուտինը շատ հստակ արգահատանք է տածում: Այդ լարվածությունը գրքի լեյտմոտիվն է: Սթոունը յուրատեսակ դիտանկյունից ներկայացնում է, թե ինչպես է աշխատում Պուտինի միտքը և, ավելի լայն իմաստով, թե զգալիորեն փոխված աշխարհում ինչ բարդ կացության մեջ է հայտնվել Ռուսաստանը: Հարցազրույցը սկսվում է մի ժամանակաշրջանում, երբ ԱՄՆ-ում քչերն էին սպասում աջակողմյան

պոպուլիստ թեկնածուի իշխանության գալուն, մինչդեռ այդ թեկնածուն կարողացավ ոչ միայն շրջանցել Հանրապետական կուսակցության մեկ տասնյակ թեկնածուներին, այլև հաղթել Դեմոկրատական կուսակցության առաջադրած մրցակցին: Հարցազրույցի վերջին մասը տեղի է ունեցել Դոնալդ Թրամփի երդմնակալությունից 20 օր անց. ահա այստեղ էլ գիրքն ավարտվում է, ինչը մի կողմից լուսավորում, մյուս կողմից հուսահատեցնում է:

Վերջին հարցազրույցում Սթոունը փորձում է հարցազրույցն այնպես ավարտել, ինչպես ագրեսիվ վավերագիրներն են անում՝ հավատալով, որ կարող են զրուցակցին ստիպել պատասխանել չպատասխանած որոշ հարցերի: Խոսքը վերաբերում է աշխարհի ամենամեծ տարածքն ունեցող երկրում Պուտինի 18 տարվա իշխանության հակասական դրվագներին: Պուտինը կախվածություն ունի՞ իշխանությունից, ինքն իրեն համարո՞ւմ է Ռուսաստանի պատմության մեջ անփոխարինելի գործիչ, կասկածի տակ չդրվող իշխանությունը փչացրե՞լ է նրա միտքը: Այս հարցերը շատ են առաջ քաշվել: Սթոունի հետ զրույցի սկիզբը Պուտինին թվում էր հաճելի, մինչդեռ վերջում Պուտինը հոգնում է՝ մտահոգվելով ոչ այնքան նրանից, որ իր մտքերը արևմտյան լսարանը չի ընդունի, այլ որ դրանք պարզապես տեղ չեն հասնի:

Առճակատվելով ամերիկացի չորրորդ նախագահի հետ, որին շատերի պնդմամբ ինքն օգնել է ընտրվել (ինչը Պուտինը հերքում է), Ռուսաստանի նախագահը, թվում է, սպառվել է իր խոսքն ամերիկյան ղեկավարությանը ջանադրաբար տեղ հասցնելու գործում: Նա պնդում է, որ ամերիկյան իշխանությունը, և, որ ավելի կարևոր է, այդ իշխանությանը տեղեկություններ մատակարարող բյուրոկրատիան Ռուսաստանն անխուսափելիորեն դիտարկում է ոչ թե որպես գործընկեր (բառ, որը նա սարկազմով հաճախ է կիրառում՝ խոսելով ԱՄՆ մասին), այլ որպես սեփական ձախողումների համար գտնված հարմարավետ քավության նոխազ:

Երրորդ հարցազրույցի եզրափակիչ մասում Պուտինը Սթոունին հարցնում է, թե նրան երբևէ ծեծե՞լ են: Սթոունը նրան վստահեցնում է՝ օ, բազմիցս, ինչին Պուտինն արձագանքում է մի արտահայտությամբ, որը դարձել էր հարցազրույցների անոնսը. «Այդ դեպքում հեշտ կտանեք, որովհետև Ձեր քթից բերելու են»:

Սա ցավոտ, բայց երևի թե հստակ կանխատեսում է՝ հաշվի առնելով այժմյան մթնոլորտը, որում լայնորեն տարածված են ԱՄՆ ընտրությանը միջամտելու համար Ռուսաստանի հասցեին ուղղված, բայց նաև չապացուցված մեղադրանքները: Սթոունը պատասխանում է. «Գիտեմ, բայց արժի... գոնե կփորձեմ մի փոքր ավելի շատ խաղաղություն ու հստակություն բերել աշխարհին»:

Ռոբերտ Շիր

Առաջին հարցազրույց

Այց 1 | օր 1 | հուլիսի 2, 2015

Պուտինի անցյալի մասին

Օլիվեր Սթոուն. Կարծում եմ՝ Արևմուտքում շատերը Ձեր մասին առանձնապես շատ բան չգիտեն, Ձեր մասին պատկերացում են կազմում հիմնականում լրատվամիջոցներից: Կցանկանայի ծանոթանալ Ձեր կենսագրությանը և իմանալ Ձեր ծագման մասին: Գիտեմ, որ ծնվել եք 1952 թվականի հոկտեմբերին՝ պատերազմից հետո, գիտեմ, որ Ձեր մայրը գործարանում էր աշխատում: Նաև, որ Ձեր հայրը կռվել է, բայց ինձ հայտնի չէ, թե ինչով է նա զբաղվել պատերազմից հետո: Նաև գիտեմ, որ մանուկ հասակում Դուք կոմունալ բնակարանում ապրել եք այլ ընտանիքների հետ:

Վլադիմիր Պուտին. Մայրս գործարանում չի աշխատել: Նա տարբեր աշխատանքներ կատարող բանվորուհի էր: Քանի որ ես նրանց միակ երեխան էի, և նրանք ավելի վաղ կորցրել էին երկու երեխաներին, որոնցից մեկին պատերազմի՝ Լենինգրադի շրջափակման ժամանակ, նրանք չէին ուզում ինձ հանձնել մանկատուն, ուստի մայրս գիշերային պահակ էր աշխատում:

Օ.Ս. Այսինքն՝ պատճառն այն էր, որ նա չէր ուզում Ձեզ հանձնել:

Վ.Պ. Այո՛, իսկ հայրս գործարանում էր աշխատում:

Օ.Ս. Որպես ինչ:

Վ.Պ. Մեխանիկ էր: Ուներ տեխնիկական միջնակարգ կրթություն և մեխանիկ էր աշխատում:

Օ.Ս. Մշտական՞, թե՞ դա ժամանակավոր աշխատանք էր:

Վ.Պ. Մշտական աշխատանք էր: Նա ընդհանրապես երկար աշխատեց: Եվ երբ անցավ թոշակի, միևնույն է, աշխատում էր, նույնիսկ երբ 70 տարեկանից էլ մեծ էր: Ոչ մի կերպ չէր կարողանում կանգ առնել:

Օ.Ս. Պատերազմի ժամանակ վիրավորվե՞լ էր:

Վ.Պ. Այո՛, նա պատերազմի սկզբում հատուկ ջոկատներում էր եղել: Դրանք հետախուզական փոքր խմբեր էին, որոնց ուղարկում էին թշնամու թիկունք՝ տարատեսակ գործողություններ իրականացնելու հանձնարարությամբ: Առաջին խմբին՝ 28 հոգու, ուղարկել էին այնտեղ: Ողջ էին մնացել միայն 4-ը: Հայրս պատմում էր ինձ այդ մասին, իսկ հետո, երբ արդեն նախագահ էի, պաշտպանության նախարարության արխիվից ինձ բերել էին այդ խմբին առնչվող գործը: Ամեն ինչ հաստատվել էր: Դրանից հետո հորս ուղարկել էին կանոնավոր բանակ՝ Լենինգրադի ճակատի ամենավտանգավոր հատվածներից մեկը, որը կոչվում էր «Նևսկի պիտաչոկ»: Մարտերն ընթանում էին Նևա գետի ափին, որտեղ խորհրդային զորքերը գրոհում էին 2-4 կմ ոչ մեծ պլացդարմ վերցնելու համար:

Օ.Ս. Շարունակենք: Ձեր ավագ եղբայրը, ենթադրում եմ, մահացել է Ձեր ծնվելուց մի քանի օր կամ մի քանի ամիս հետո, ճի՞շտ է:

Վ.Պ. Ո՛չ, նա մահացել է Լենինգրադի շրջափակման ժամանակ, նա մոտ երեք տարեկան էր: Ընդ որում, այդ ժամանակ երեխաներին փրկելու նպատակով նրանց ընտանիքներից կտրում էին, որպեսզի փրկեին կյանքերը, սակայն իմ եղբայրը հիվանդացել էր ու մահացել: Ծնողներիս նույնիսկ չէին հայտնել, թե նա որտեղ է հուղարկավորված: Բոլորո-

վին վերջերս դրանով հետաքրքրված մարդիկ արխիվներում հայտնաբերել էին թղթեր, որտեղ նշվում էին երեխաների անունները, ազգանունները, հայրանունները և հասցեները, որտեղից նրանց տարել էին: Այդ մարդիկ գտել էին մանկատանը իմ եղբոր գտնվելու վերաբերյալ փաստաթղթերը, նրա մահվան ու հուղարկավորման փաստաթղթերը: Անցած տարի ես առաջին անգամ եղա այն վայրում, որտեղ նրան հուղարկավորել էին: Դա Պետերբուրգում գտնվող պանթեոնում է:

Օ.Ս. Երկրորդ աշխարհամարտի զոհերը հաշվի առնելով՝ մնում է միայն հուսալ, որ Ձեր ծնողներին այդ ողբերգությունը չէր կոտրել: Երրորդ որդին երևի թե նրանց համար նման էր նոր հույսի:

Վ.Պ. Ո՛չ, ո՛չ, նրանք կոտրված չէին, բայց պատերազմը 45 թվականին ավարտվեց, իսկ ես ծնվեցի 1952 թվականին, և դա շատ ծանր շրջան էր Խորհրդային Միության շարքային քաղաքացիների համար: Բայց, միևնույն է, նրանք համարձակվեցին երեխա ունենալ:

Օ.Ս. Ես լսել եմ, որ Դուք պատանի հասակում որոշակի խնդիրներ եք ունեցել օրենքի հետ: Որքան տեղյակ եմ, Դուք բավական անկառավարելի երեխա եք եղել, մինչև որ 12 տարեկանում սկսել եք զբաղվել ձյուդոյով:

Վ.Պ. Դե՜... այո՛: Գիտեք, ամեն դեպքում, թեև ծնողներս փորձում էին ինձ ինչ-որ ժամանակ հատկացնել, ես շատ ազատ ռեժիմով էի ապրում, շատ ժամանակ էի անցկացնում փողոցում, բակում, և, իհարկե, միշտ չէ, որ փայլում էի կարգապահությամբ, մեղմ ասած: Երբ սկսեցի համակարգված զբաղվել սպորտով՝ ձյուդոյով, դա սերմանեց կարգապահություն և իմ կյանքը աստիճանաբար փոխեց դեպի լավը:

Օ.Ս. Ես նաև լսել եմ, որ Ձեր մորական պապը Լենինի ու Ստալինի խոհարարն է եղել որոշ ժամանակ:

Վ.Պ. Այո՛, դե՛, այդպես էր ստացվել: Ինչպես մեզ մոտ են ասում, աշխարհը փոքր է, դա ճիշտ է: Նա դեռ 1917 թվականի հեղափոխությունից